

## ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶ

### ՆՈՐ ՆԱԽԻԶԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՒ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂԵՐԻ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր Նախիջեանի հայկական գաղութի պատմությունը հանդամանորեն շարադրված է պրոֆ. Վ. Բ. Բարխուդարյանի երկհասոր ծավալուն աշխատության էջերում<sup>1</sup> և ըտղմաթիվ դիտական հողվածներում։ Մնչուշտ, արժանին պեաք է հասուցել նաև նախորդ ուսումնասիրողներին՝ Մ. Բժշկյանին, Ա. Զալալյանին, Երվ. Շահաղիդին և այլոց, որոնք ապրեր դիանկյուններից անդրադարձել են այս գաղութի պատմության այլեւայլ հարցերին՝ հենվելով նաև իրենց իսկ ընդօրինակած վիմական բնադրերի փասական նյութերի վրա<sup>2</sup>։

Նրիմի թերակղուց գեպի Դոնի աստիասանները գաղթեցին շուրջ 13000 հայեր։ Նրանք եկել էին Կաֆա (այժմ՝ Թեոդոսիա), Ղարասուրաղար (այժմ՝ Բելոդորսկ), Աղմեչիդ (այժմ՝ Սիմֆերոպոլ), Սուլյանաթ (նախկինում՝ Սուլը Խաչ, նաև Էսկի Կրիմ, այժմ՝ Սաարի Կրիմ), Կեռողե (այժմ՝ Եվլապառիա), Բախչիսարայ քաղաքներից, ինչպես նաև Թոփսի (Թոփլի), Սալա, Սուլթան Սալա, Օրթալան (Օրթալանկ), Կամըշլըկ, Չուրուկ-սու, Բուրունչակ, Օթար, Թոփչակ, Սրմյանսկի Բաղար կամ Օրբաղար (այժմ՝ Սրմյանսկ քաղաք) և այլ դյուդերերից։

Ռուսական կայսրությունը որոշակի արառնություններ չնորհեց գաղթական հայերին<sup>3</sup>, որոնք անավորվելուց հետո, բաղմաթիվ զրկանքներ կրելով, լծվեցին շինարարական աշխատանքների. կառուցեցին վանքեր ու եկեղեցիներ, հիմնադրեցին գարոցներ, մշակույթի օջախներ։ 18-րդ դարի 80-ական թվականներին նոր Նախիջեան աեղափոխվեց Գրիգոր Խալդարյանի պեաերրության ապարանը, որն իր աեսակի մեջ եղակի էր ողջ Հարավային Ռուսիայում։ Դեռևս 1780 թ. մայիսի 9-ին Հ. Արղությանը իշխան Հովհաննես կայսերական հետ միասին Թարսկոյե Սելո ամառանոցում հանդիպել էր Եկաաերինա Բ կայսրուհուն, պաամել նրան 1779 թ. նոյեմբերի 14-ի արքայական շնորհագրի կենսադրժման դժվարությունների մասին<sup>4</sup>։

1850-ական թվականներին նոր Նախիջեանի հայ գաղութն ուներ արդեմ 3000 առւն բնակչություն<sup>5</sup>։ Քաղաքն օրըսաօրէ վերելք էր ապրում. բնդարձակվում էին առեառուրն ու արդյունաբերությունը, աշխուժանում էր հասարակական-քաղաքական կյանքը։ Նոր Նախիջեանը դառնում էր ոռուսահայոց մտավորականության ճանաչված կենարոններից մեկը։

Հեաաքրքիր է նշել, որ զրիմեցի հայերը Դոնի աստիասաններում կառուցած բնակա-

1 Վ. Բ. Բարխուդարյան, Նոր Նախիջեանի հայկական գաղութի պատմություն, գիրք Ա. (1779-1861), Երևան, 1967, գիրք Բ (1861-1917), Երևան, 1985։

2 Մ. Բժշկյան, Շանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, Ա. Զալալյան Շանապարհորդութիւն..., Բ. Բ. Տիգիս, 1958, Երվ. Շահազիդ. Նոր Նախիջեանը և Նոր Նախիջեանցիք. «Ազգագրական հանդես», 6-7 գործեր, Թիֆլիս, 1901, 1903։

3 Նոր Նախիջեանի քաղաքական-տնտեսական կյանքում որոշակի դեր կատարեցին Եկաաերինա Բ կայսրություն 1779 թ. նոյեմբերի 14-ի շնորհագիրը, Պավել Ա-ի 1779 թ. հունվարի 4-ի հրամանագիրը, ինչպես նաև կայսր Ալեքսանդր Ա-ի 1802 թ. դեկտեմբերի 21-ի հրովարտակը (տես Վ. Բ. Բարխուդարյան, նշվ. աշխ., գիրք Բ, էջ 11-12)։

4 Տես Երվ. Շահազիդ, Նոր Նախիջեանը և Նոր Նախիջեանցիք, էջ 42։

5 Ա. Զալալյան, Շանապարհորդութիւն..., Բ. Բ. էջ 456-457։ Հմտ. Մ. Բժշկյան նշվ. աշխ., էջ 391-394։

վայրելն ու Հոգեոր օջախները կոչում են իրենց նախկին՝ ղրիմյան անուններով։ Թոփտի, Մեծ նախարար Արքա (Սուլթան Սալա), Նիսվիթա, իսկ Ղրիմի Հոչակավոր Սուլուս Խաչ վանքի նախարար Արքա (Սուլթան Սալա), Նիսվիթա կոչ՝ նորահասաաա քաղաքի վանական համալիրը հիշատակը հավերժացնելու նպատակով՝ նորահասաաա քաղաքի վանական համալիրը նույնպես անվանում են Սուլուս Խաչ։

Միայն նոր նախիջեանում նորեկ հայերը կառուցում են յոթ եկեղեցիներ, իսկ գյուղական վայրերում՝ մեկական, ընդ որում թոփտի գյուղում երկուս՝ Ս. Սարգիս և Ս. Փրկիչ անուններով։ Նոր նախիջեանի<sup>1</sup> յոթ եկեղեցիներից այսօր կանգուն է միայն Ս. Կարապետը՝ գերեզմանոցի ոչ մեծ եկեղեցին, մյուսները հիմնահատակ ոչնչացված են։ Կանգուն կամ կիսակեր վիճակում են Մյասնիկյանի շրջանի հայարնակ գյուղերի հոգեոր կառույցները, իսկ շրջկենարոն Զալթրում դորձող է Ս. Հարություն եկեղեցին։

1970-ական թվականներին, ընդառաջելով ոսոսառվահայության պահանջին՝ մարզային իշխանությունները համաձայնեցին վերականգնել բարձրիդողի վիճակում գտնված Ս. Խաչ վանքի համալիրը՝ նրա սրահները արամագրելով հայ և ոսւս ժողովուրդների բարեկամության թանգարանին։ Այս ագդանվեր գործին իրենց մասնակցությունն ունեցան Հայաստանի Հանրապետության հուշարձանների պահպանման ընկերությունը և մի խումը հայ մաավորականներ (Մ.Ս. Սարյան, Վ.Բ. Բարխուդարյան, Մ.Վ.Գրիգորյան, Վ. Մ. Հարությունյան և ուրիշներ)։

Ոսոսառվի մարզից պրակում գեաեղված արձանագրությունների մեծ մասը այժմ գոյություն չունի, դրանք արվում են նախորդ հրատարակիչների վերծանությամբ։ Մենք ընդօրինակել ենք նաև հեասագույն շրջանի կարեոր վիմագրերը, ինչպես նաև եկեղեցիների պատահին և սրբապատճենների վրա եղած մակագրությունները։

## ՌՈՍՏՈՎԻ (ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ) ՍՈՒԻՐԲ ԽԱՆՔ ՎԱՆՔ

Ղրիմից հեաո ոուսահայ գաղութի ամենախոշոր հոգեոր և կրթա-մշակութային կենարոնը եղել է նոր նախիջեանի Սուլուս Խաչ վանքը։ Սյն գանվում է այժմյան Ռոստով քաղաքի հյուսիսային մասում, նախկինում Թեմուրլանկ կոչվող ծորակի<sup>2</sup> սարալանջի վրա, որի աակից բխում են սառնորակ ու քաղցրահամ ազգյուրները։ Վանքը հիմնագրվել է 1783 թ. և օծվել է 1792 թ. ոուսահայոց հոգեոր առաջնորդ Հովսեփ արք. Սրգությանի կողմից։ Այս առթիվ Հ. Մրգությանի «Դաւթար»-ում հիշատակված է։

«Ընդ սմին (իմա՝ Գրիգոր Լուսավորիչ Ակեղեցու-Գ. Գ.) օծաք զիհմունս վանիցն, որ յանուն Փրկչին եւ Ս. Խաչին»<sup>3</sup>։

Ս. Խաչ վանքն ունեցել է իր դպրոցը, սեփական ապարան<sup>4</sup>, բազմաթիվ անաեսական շենքեր, հարուսա կալվածներ, որոնք մասսար մշակում էին վանքապատկան «խուարորի» 30 առւն հայ բնակիչները։ Հասա Ս. Զալալյանի վկայության<sup>5</sup> վանքն ունեցել է ավելի քան 8000 դեսաաին (մոաավորապես 8800 հեկաար) վարելահող, որից 300 օրավարը մշակվում էր

<sup>1</sup> Նոր նախիջեանն իբրև առանձին քաղաք այժմ գոյություն չունի. այն մացված է Ռոստովի վարչական տարածքի մեջ և կոչվում է Պրոլետարական շրջան։ Ի դեպ նկատենք, որ մինչև 20-րդ դարը նույնպես փորձեր են եղել միավորենու Ռոստով և նոր նախիջեան քաղաքները, սակայն հայ ազգաբնակչությունն ընդունակություն է ցուց ավել (աեն Վ. Բ. Բարխուդարյան, Աշվ. աշխ., գիրք Բ, էջ 10-26)։

<sup>2</sup> Ս. Զալալյան, Բ, էջ 468։

<sup>3</sup> Ե. Շահագիզ, Նոր-նախիջեանը և նոր նախիջեանցիք, էջ 68։

<sup>4</sup> Տարածի մեքենաները, որոնք բերված էին Պետերբուրգից, հեասագում անդափոխավում են Աստրախան (աեն Ս. Զալալյան, Բ, էջ 468)։

<sup>5</sup> Ս. Զալալյան, Բ, էջ 460։